ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1915-1920թթ.)

ՄԱՐԻԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ինչպես հայտնի է Առաջին աշխարհամարտը ողբերգական հետևանքներ ունեցավ հայության համար: Թուրքական իշխանությունները պատերազմի հենց սկզբից կազմակերպված, հետևողականորեն իրականացրեցին հայության բնաջնջման իրենց ծրագիրը, որի արդյունքում Արևմտյան Հայաստանը պարպվեց իր բնիկ տերերից: Ցեղասպանությունից հրաշքով փրկված հայության բեկորները սփռվեցին աշխարհով մեկ, նաև՝ Արևելյան Հայաստանում և Ռուսական կայսրության այլ վայրերում: 1914-1916 թվականներին Ռուսական կայսրության սահմաններ ներգաղթած հայ փախստականների (հիմնականում կանայք և երեխաներ) թիվը հասնում էր 300000-ի:[1] Բռնագաղթված բնակչությունը հայտնվեց ծանր կացության մեջ: Սովը և համաճարակային հիվանդությունները խլում էին հազարավոր մարդկանց կյանքեր: Առանձնապես վտանգված էր երեխաների, մասնավորապես, որբացած երեխաների ֆիզիկական գոյությունը, որոնց թիվն անցնում էր 10000-ից:[2] Հրատապ խնդիր դարձավ նրանց ապաստանելը, ապրուստի միջոցներ հայթայթելը, բժշկական օգնությամբ և աշխատունակներին՝ աշխատանքով ապահովելը:

Եվ չնայած ծայր աստիճան աղքատությանը՝ Անդրկովկասի հայ գյուղացիությունն առաջինն արձագանքեց իր հայրենակիցների կարիքներին: Երևանի և Ելիզավետպոլի նահանգներ մեկնած և տեղի գաղթականության վիճակին անձամբ ծանոթացած Ռուսական Պետական դումայի անդամ Պապաջանյանն[3] այդ կապակցությամբ գրում է. «Այս միջոցները, որոնք պետությունը տալիս էր փախստականների կարիքների համար և այն օգնությունը, որ ցույց էին տալիս բարեգործական ընկերությունները, շատ չնչին կլինեին, եթե չլիներ Անդրկովկասի հայ գյուղացիության կարեկցական վերաբերմունքը՝ անհավատալի չափերով նեղություն կրելով փախստական եղբայրներին օգնելու և վերջին կտոր հացը նրանց հետ կիսելու պատրաստակամությունը»:[4]

Ռուսական իշխանությունները բավարար ուշադրություն չէին դարձնում գաղթականության հարցերին, բայց չէին կարող նաև լրիվ անտարբեր մնալ նրանց անմխիթար կացության նկատմամբ, մանավանդ, որ ժամանակի ռուս հասարակական, քաղաքական գործիչների և մտավորականների

(Գորկի, Բրյուսով) ելույթներում պարբերաբար հնչում էր այն միտքը, որ հայ ժողովրդի դժբախտությունների պատճառը ռուսական կողմնորոշումն է և նրան հավատարիմ լինելու հանգամանքը:

Անգամ արտաքին գործերի գերատեսչության ղեկավար Ս. Սազոնովը գտնում էր, որ «Ռուսաստանը բարոյական պարտք ունի՝ պաշտպանելու հայ ժողովրդին նրա ողբերգական ծանր պահին, մի ժողովրդի, որը հավատարիմ է ռուսական գահին և Ռուսաստանին»:[5]

Բացի այդ, իշխանությունները ռազմական հաջող գործողություններից և, հատկապես, Էրզրումի գրավումից հետո լրջորեն սկսեցին մտածել նվաճված տարածքներում հաստատվելու և հայ գաղթականության այստեղ վերաբնակեցնելու մասին, ուստի կարևոր էր նրանց ֆիզիկական գոյության ապահովումը: Գաղթականների հարցերով զբաղվելու և նրանց խնդիրները լուծելու նպատակով ռուսական կառավարությունը Թիֆլիսում ստեղծեց «Պատերազմից տուժածների օգնության Կովկասյան կենտրոնական կոմիտե»: Սակայն, այնուհանդերձ, առանց հասարակության բոլոր խավերի աջակցության հնարավոր չէր լինի իրականացնել շուրջ 300000-ի հասնող հայ գաղթականության հոգածությունը, ուստի իշխանությունների թույլտվությամբ ստեղծվում են զանազան բարեգործական հասարակական կազմակերպություններ: Եվ չնայած այդ բարեգործական ընկերություններին օգնելու նպատակով պետությունն իր կողմից հատկացնում էր նպաստ, այնուհանդերձ, հայ գաղթականների օգնության հիմնական ծանրությունն ընկել էր հայ հասարակության և նրա կողմից ստեղծված բարեգործական ընկերությունների վրա:

Դեռևս 1914 թվականի հոկտեմբերի 26-ին մոսկվաբնակ հայերը Ս. Մամիկոնյանի, Կ. Կուսիկյանի, Ա. Ծատուրյանի, Ա. Ջիվելեգովի նախաձեռնությամբ ստեղծում են Մոսկվայի հայկական կոմիտեն, որի նպատակը պատերազմից տուժածներին օգնություն կազմակերպելն էր: Կոմիտեն գործունեություն էր ծավալում միայն Ռուսական կայսրության սահմաններում, սակայն հետագայում այն իր գործունեության աշխարհագրությունը հասցրեց մինչև Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ՝ Էրզրում, Մամախաթուն, Բայբուրդ:

Մոսկվայի հայկական կոմիտեն սկզբում բավարարվում էր իր կողմից հանգանակած գումարները[6] և դրանցով գնված սննդամթերքն ու դեղորայքը պատերազմից տուժածների օգնությամբ զբաղվող մարմիններին և կազմակերպություններին փոխանցելով: Սակայն պարզելով, որ այդ միջոցները չեն իրացվում ժամանակին և հաճախ ամբողջությամբ չեն ծառայում նպատակին և որ փախստականների և որբերի համար Պետրոգրադից բաց թողնված պետական նպաստները Կովկասյան վարչակազմի պահանջով իրացվում են նահանգապետերի և պաշտոնյաների միջոցով, ու գումարների կեսն իր նշանակությանը չի ծառայում, Մոսկվայի հայկական կոմիտեն գործը կարգավորելու նպատակով Պետրոգրադում հրավիրում է հայերի համառուսաստանյան համագումար:[7] Նախատեսվում էր համագումարում միավորել պատերազմից տուժածներին օգնող բոլոր հայ հասարակական կազմակերպությունները, ստեղծել մեկ ղեկավար կենտրոն, որն էլ պետությունից ստացվող բոլոր միջոցները հավասարաչափ կբաշխեր համապատասխան կազմակերպություններին: Սակայն համագումարն իր նպատակին չծառայեց կազմակերպությունների միջև ի հայտ եկած տարաձայնությունների հետևանքով: Իսկ իր կողմից օգնությունն

ավելի նպատակային դարձնելու համար կոմիտեն դիմում է առավել արդյունավետ միջոցների. ստեղծվում են օգնության հատուկ ջոկատներ, որոնք ֆինանսավորելով Մոսկվայից (կոմիտեի կենտրոնից), ուղարկվում են գաղթականներով բնակեցված շրջաններ:[8] Ջոկատները գաղթականներին ցույց էին տալիս բազմակողմանի օգնություն, ապահովում էին սննդով, աշխատանքով, բուժսպասարկմամբ, հայտնաբերում և ապաստան էին տալիս որբերին: Կոմիտեի ջոկատների ջանքերով միայն Դերսիմի լեռներում հայտնաբերվեցին շուրջ 450, իսկ Մամախաթունի և Բայբուրդի շրջաններում 800 որբ երեխաներ: Երեխաներից շատերը հայտնաբերվել էին քրդերի և մահմեդականների ընտանիքներում: Հայտնի է, որ Երզնկայի գրավումից հետո այստեղի ջոկատը թուրքական ընտանիքներում հայտնաբերեց և ազատեց մինչև 12 տարեկան շուրջ 500 հայ երեխա (բոլորն էլ մահմեդականացված):[9]

Հայ որբ երեխաների հայտնաբերումը և նրանց խնամատարությունը դարձավ բոլոր հայ բարեգործական ընկերությունների, այդ թվում՝ Մոսկվայի հայկական կոմիտեի գլխավոր խնդիրներից մեկը: Անհրաժեշտ էր բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցներով փրկել որբացած և անպաշտպան մնացած հայ մանուկին, ապահովել նրանց սննդով, տալ կրթություն, մասնագիտություն, օգնել ոտքի կանգնել:

Այս նպատակին ծառայելու եկան բարեգործական ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և անհատ բարեգործների կողմից բացված որբանոցները:

Մոսկվայի հայկական կոմիտեն իր առաջին որբանոցը բացեց 1915թ. հուլիսի 24-ին, Էջմիածնում[10], օգոստոսի 1-ին (կրկին Էջմիածնում) բացվում է երկրորդ որբանոցը:

Այնուհետև կոմիտեն որոշեց ընդլայնել իր կողմից պահվող որբանոցների ցանցը, բայց Էջմիածնում ազատ շինություններ այդ նպատակի համար գտնելը այնքան է բարդանում, որ կոմիտեն Էջմիածնի որբանոցները տեղափոխում է Աշտարակ և հենց այստեղ էլ, ավելացնելով դրանց թիվը, հասցնում է 12-ի (9-ը որբանոց՝ Աշտարակում, 1-ը՝ Օշականում, 2-ը՝ Փարպի գյուղում), ընդամենը 578 որբերով:[11]

Մոսկվայի հայկական կոմիտեն որբանոցներ էր պահում նաև Ղուրդուղուլիում (ներկայիս Արշալույս գյուղ)՝ 3, Ալեքսանդրապոլում՝ 6, Էրզրումում՝ 2, Սարիղամիշում՝ 1, Երզնկայում՝ 1, Բայբուրդում՝ 1, Մոսուլում՝ 1, ընդամենը՝ 24 որբանոց՝ 1603 որբերով:[12]

Գիտակցելով որբախնամ գործի կարևորությունը և ռուսական իշխանությունների նշանակած նպաստի անբավարար չափը (ամսեկան 15 ռուբլի յուրաքանչյուր երեխայի համար), կոմիտեն իր միջոցների զգալի մասը հատկացնում է այս գործի լավագույնս կազմակերպմանն ու իրականացմանը՝ յուրաքանչյուր երեխայի համար ծախսելով 36 ռուբլի 61 կոպեկ:[13]

Սակայն 1917թ. հոկտեմբերյան հեղափոխությունից, Անդրկովկասը Ռուսաստանից անկախ հայտարարելուց հետո հայ բարեգործական, այդ թվում և որբախնամ ընկերությունները զրկվեցին ռուսական իշխանությունների կողմից հատկացվող պետական նպաստներից, իսկ Մոսկվայի հայկական կոմիտեն՝ նաև իր կենտրոնից ստացվող օգնությունից:[14] Ավելին, բոլշևիկների հեղաշրջումից հետո հաշտության մասին օրենքի համաձայն, ռուսական զորքը սկսեց կանոնավոր կերպով և արագ լքել Կովկասյան ռազմաճակատը՝ վտանգի տակ դնելով այդ տարածքներում

հաստատված հայ բնակչության ու նաև՝ գոյություն ունեցող որբանոցների ճակատագիրը: Մոսկվայի հայկական կոմիտեն ստիպված էր Էրզրումի, Բայբուրդի, Սարիղամիշի և Երգնկայի իր որբանոցների[15] 1200 սաներին տեղափոխել ավելի ապահով վայր՝ Ջալալօղլի:[16]

Ինչպես հայտնի է ռուսական զորքերի նահանջին հետևեց թուրքական արշավանքը, որի արդյունքում գրավվեցին ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններ՝ Ալեքսանդրապոլը, Կարսը, Ախալքալակը, Ախալցխան, Դիլիջանը, Ղարաքիլիսան: Շուրջ 650000 արևելահայեր դարձան գաղթական, որբերի թիվը հասավ 40000-ի: Այս որբերի խնամքի, դաստիարակության և կրթության դժվարին և պատասխանատու գործը բաժին ընկավ Հայաստանի նորաստեղծ հանրապետությանը:

1918 թվականին հոկտեմբերի 1-ի կառավարական օրենքով սկսվեց պետական որբանոցների կազմակերպման գործը:

1918 թվականին հոկտեմբերի 1-ից մինչև 1919 թվականի ապրիլը խնամարարության նախարարությանը հաջողվեց հավաքել 15612 որբ երեխաների, որոնք տեղակայվեցին 76 որբանոցներում:[17] Ըմբռնելով որբախնամ գործի կարևորությունը և ակնկալելով այդ գործում նախկինում մեծ փորձ ունեցող կազմակերպությունների աջակցությունը, Հայաստանի կառավարությունը որբանոցների մի մասը հանձնեց այդ կազմակերպություններից Եղբայրական օգնության հանձնաժողովին, Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը և Մոսկվայի հայկական կոմիտեին, համապատասխանորեն նյութական օժանդակություն սահմանելով՝ յուրաքանչյուր որբ երեխայի համար ամսական 150 ռուբլի նպաստ:[18] Մինչև 1919 թվականի մայիսը Մոսկվայի հայկական կոմիտեի ենթակայության տակ կային 8 որբանոց՝ 746 որբերով[19], որոնցից 7-ը՝ Աշտարակում, 1-ը՝ Երևանում: Այս որբանոցների պահպանության համար կոմիտեն պետությունից ստանում էր նպաստ և կառավարում ինքնավար կերպով:

Սակայն պետության միջոցներով որբ երեխաների խնամատարությունը, մի կողմից՝ երկրի սոցիալ-տնտեսական ծանր կացությամբ, մյուս կողմից՝ արտաքին անբարենպաստ դրությամբ պայմանավորված՝ դժվարանում էր: Արդյունքում՝ պետական խնամքով պահվող որբ երախաների վիճակը գնալով անմխիթար էր դառնում. նպաստը չէր բավականացնում նրանց նվազագույն սննդի ապահովման համար, որի պատճառով երեխաները փախչում էին որբանոցներից և փողոցներում մուրացկանություն անում: Այդ և դեռ փողոցներում անխնամ մնացած հայ որբ երեխաների գոնե ֆիզիկական գոյությունը փրկելու համար Հայաստանի կառավարությունն ընդունում է Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ) առաջարկը՝ որբախնամ գործն իրեն հանձնելու մասին և 1919թ. մայիսի 1-ի համաձայնագրով[20] Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր որբանոցները անցնում են Ամերկոմի ենթակայության տակ[21] (87 որբանոց, 11 հիվանդանոց, 19650 որբերով):

Կառավարության այս որոշումը հասարակական և քաղաքական գործիչների շրջանում տարբեր արձագանքներ է ստանում: Նրանց ճնշող մեծամասնությունը դեմ էր դրան և աններելի էր համարում այդ պատասխանատու գործն ամբողջությամբ օտարերկրացիներին հանձնելը:[22] Ամենից շատ, սակայն, այս համաձայնագրից դժգոհ էին Մոսկվայի հայկական կոմիտեի անդամները, որոնք 5 տարի շարունակ ջանք, եռանդ և միջոցներ չէին խնայել այս աշխատանքները անհրաժեշտ մակարդակով իրակա-

նացնելու համար և համոզված էին, որ ոչ մի օտարերկրյա կազմակերպություն չի կարող ավելի լավ, քան հայն իրականացնել հայ երեխայի խնամքն ու դաստիարակությունը: Նրանց կարծիքով հայ հասարակությունը պարզապես իրավունք չուներ հրաժարվել անպաշտպան մնացած հայ մանուկի խնամքից, որքան էլ որ այն բարդ ու դժվար լիներ և պարտավոր էր իր հնարավորությունների սահմանում օժանդակել պետությանը՝ պահել իր ազգի որբացած մանուկներին: Հենց նրանց ճնշման տակ էլ կառավարությունը մասամբ վերանայում է իր որոշումը և 1919 թվականի հուլիսի 1-ին Ամերկոմից ընդունում 25 որբանոց, 4 հիվանդանոց՝ 2498 որբերով:[23] Կրկին լծվելով որբախնամ գործին՝ կոմիտեն իր կողմից պահվող որբանոցների թիվը հասցնում է 18-ի՝ 1614 որբերով[24], որոնցից 11-ը՝ Աշտարակում (881 երեխա), 6-ը՝ Թիֆլիսում, 5-ը՝ Կրծանիսում, 1-ը՝ Վերայում, ընդամենը 657 որբերով:[25]

Այնուհետև, համոզվելով, որ որբախնամ գործն Ամերկոմին հանձնելուց հետո խնդիրն ամբողջությամբ չի լուծվում[26], Հայաստանի կառավարությունը վերսկսում է պետական որբանոցների կազմակերպումը՝ նախատեսելով նրանցում խնամվող երեխաների թիվը հասցնել 20000-ի:

Բայց պետական միջոցներով խնամվող որբերի թիվը 20000-ի հասցնել այդպես էլ չհաջողվեց: Երկրի ներքին ռեսուրսները սպառված էին, իսկ դրսից (հիմնականում ԱՄՆ-ից) եկող օգնությունը՝ պատահականությունների ենթակա:[27] Այս ամենի արդյունքում Հայաստանում ապրանքների գները աճում էին անհավանական մեծ թռիչքով: Որբանոցային ծախսերի համար կազմված նախահաշիվները իրագործել չէր հաջողվում: Դժվար էր հատկապես Հայաստանից դուրս՝ հիմնականում Վրաստանում ապաստանած հայ որբերի և գաղթականության խնամքի իրականացումը: Այս նպատակով հանրապետությունը զգալի գումարներ էր տրամադրում երկրից, որն էլ ֆինանսների նախարար Արարատյանի համոզմամբ խորացնում էր հայկական դրամի արժեզրկումը և բացասաբար ազդում երկրի ընդհանուր ֆինանսական դրության վրա:[28] Իրավիճակը շտկելու հույսով կառավարությունը որոշում է հայ գաղթականությանը և որբանոցները (թե՛ պետական և թե՛ հասարակական կազմակերպությունների) փոխադրել Հայաստան:[29] Այդ որբանոցների խոշորագույն մասը փոխադրվում է Ալեքսանդրապոլ և հանձնվում Ամերկոմի խնամատարությանը: Մոսկվայի հայկական կոմիտեն Թիֆլիսում պահում էր 6 որբանոց (750 որբերով), որոնց կից գործում էին 3 արհեստանոց (ատաղձագործական, կոշկակարության, դեղագործի), մանկապարտեզ և հինգդասյա գիմնազիա:

1920 թվականի հուլիսին, երբ գիմնազիայի դասերն ավարտվում են, Թիֆլիսից Հայաստան են փոխադրվում նաև Մոսկվայի հայկական կոմիտեի այդ որբանոցները: Սակայն խնամատարության նախարարության որոշմամբ այդ որբանոցների սաները (750) տեղավորվում են Կարսի ամերիկյան որբանոցներում: Կոմիտեի համար միանգամայն անսպասելի այս որոշումն ուներ իր բացատրությունը: Բանն այն է, որ երկիրն անհավանական մեծ ծախսեր էր կատարում գաղթականության, հայ որբերի և բանակի վրա: Այդ ծախսերը տասն անգամ գերազանցում էին պետության եկամուտները:[30] Պետական միջոցների անբավարարության և հասարակության օժանդակության նվազման[31] պայմաններում կառավարությունը ստիպված էր Վրաստանից Հայաստան փոխադրված որբերի (2500) խնամքը հանձնել Ամերկոմին: Ուստի, խնամատարության նախարարու-

թյան և կառավարության այդ որոշումը ոչ թե Մոսկվայի հայկական կոմիտեի նատմամբ անվստահության արտահայտություն էր, այլ ժամանակի պահանջ և շուրջ 2500 որբ երեխաների գոնե ֆիզիկական գոյությունը փրկելու անհրաժեշտ քայլ:[32] Այդ է վկայում և այն, որ կոմիտեի խնամքին շարունակում էին մնալ դեռ Աշտարակի թվով 11 որբանոցները՝ մոտ 880 երեխաներով:

Հայաստանի խորհրդայնացումից հետո (1920թ. դեկտեմբեր) Մոսկվայի հայկական կոմիտեն լուծարվեց, և նրա ենթակայության տակ գտնվող որբանոցները՝ իրենց սաներով, անցան ՀՍԽՀ սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարության խնամատարությանը:[33]

Ամփոփելով Մոսկվայի հայկական կոմիտեի որբախնամ գործունեությունն անհրաժեշտ է մասնավորապես կարևորել այն հանգամանքը, որ նրա կողմից պահվող բոլոր որբանոցներում մեծ ուշադրություն է դարձվել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը: Երեխաների (հատկապես 11 տարեկանից բարձր) համար շատ կարևոր էր մասնագիտական կրթությունը: Այդ նպատակով կոմիտեն իր գրեթե բոլոր որբանոցներին կից բացում էր արհեստանոցներ, վարձում վարպետ-ուսուցիչներ՝ արհեստներ սովորեցնելու համար: Երեխաներին սովորեցնում էին հիմնականում կոշկակարություն, ջուլհակություն, այսինքն՝ հատկապես այն արհեստները, որոնք անհրաժեշտ էին նաև որբանոցներին և երեխաներին՝ որբանոցային ծախսերը կրճատելու համար:

Որբ երեխաների դաստիարակության և միաժամանակ, նրանց՝ հողի հետ կապելու և գյուղատնտեսական աշխատանքներին ընտելացնելու նպատակով (որովհետև նրանց մեծ մասը ապագայում հնարավոր էր գյուղատնտեսությամբ զբաղվեր) կոմիտեն նույնիսկ հող էր վարձակալել որբանոցներին կից բանջարանոցներ ստեղծելու համար: Հայտնի է, օրինակ, Փարպի գյուղի մոտ վարձակալած շուրջ 12 դեսյատին հող զբաղեցրած բանջարանոցը[34], որը որբանոցներին 1 միլիոն ռուբլու եկամուտ տվեց: Ավելի առաջ գնալով իրենց ձեռնարկումներում՝ Մոսկվայի հայկական կոմիտեի որբախնամ գործի նվիրյալները՝ Մակարյան, Գյանջեցյան և ուրիշներ, գտնում էին, որ արհեստանոցների և սեփական ագարակների միջոցներով որբանոցները կարող են հոգալ սեփական կարիքների մեծ մասը և ազատել նորաստեղծ Հայաստանի հանրապետությանը շատ ծախսերից:

Սակայն կյանքը ցույց տվեց, որ մեծ մասշտաբներով արհեստանոցներ աշխատացնելը և ագարակներ պահելը ֆինանսական մեծ ներդրումներ են պահանջում, որպիսիք կոմիտեն չուներ, իսկ հանրապետությունը չէր կարող տրամադրել:

Մոսկվայի հայկական կոմիտեի որբանոցներում անհրաժեշտ ուշադրություն է դարձվել նաև երեխաների կրթությանը: Յուրաքանչյուր որբանոց ունեցել է դպրոց և գրադարան: Աշտարակի որբանոցներին կից բացված դպրոցը տարիների ընթացքում վերածվեց պրոգիմնազիայի, որտեղ պատրաստում էին նույնիսկ գթության քույրեր:[35] Առավել ընդունակ տղա սաներին ուղարկում էին Թիֆլիս՝ ուսումը շարունակելու, իսկ ընդունակ աղջիկ սաների համար բացվել էին անգլերենի և ռուսաց լեզվի կուրսեր:[36]

Չունենալով որբախնամ գործում փորձ և հմտություն, այդուհանդերձ կոմիտեի գործիչները սկզբից ևեթ կարողացան լավագույնս իրականացնել իրենց վրա վերցրած պարտավորությունները և դառնալ Կովկասում գործող որբախնամ կազմակերպություններից և ընկերություններից

ամենաօրինակելին ու կազմակերպվածը: Հաղթահարելով բոլոր դժվարությունները՝ կոմիտեն շարունակեց իր գործունեությունը նույնիսկ այն ժամանակ, երբ զրկվեց իր կենտրոնի՝ Մոսկվայի օժանդակությունից և հիմնական միջոցներից: Հույսը դնելով գերազանցապես սեփական հնարավորությունների ու հնարամտությունների վրա (արհեստանոցների, բանջարանոցների և ցուցահանդես վաճառքների կազմակերպում և այլն) Մոսկվայի հայկական կոմիտեն կարողացավ ապահովել իր խնամքի տակ գտնվող որբ երեխաների ոչ միայն ֆիզիկական գոյությունը, այլ տալ կրթություն, ճիշտ դաստիարակություն, համարելով դա պատվի և արժանապատվության խնդիր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Խատիսյան Ալ. Քաղաքապետի մը հիշատակները, Բեյրութ, 1991, էջ 251:
[2] «Աշխատավոր», 1919, մարտ, N 5:
[3] Նրա վկայությամբ հատկապես ծանր էին Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Երևանի գաղթականության վիճակը, որի 40-50%-ը երեխաներ էին, 30-40%-ը՝ կանայք և միայն 20-30%-ը՝ տղամարդիկ:
[4] Русские источники о геноциде армян в Османской империи, 1915-16гг., Ереван, 1995, см 56-57.
[5] Борян. Армения, Международная дипломатия и СССР, ч. II, см. 427.
[6] Այդ գումարները գոյանում էին անդամավճարներից, նվիրատվություններից, բարեգործական համերգներից, հրատարակություններից և այլն:
[7] Չալխուշյան. Կարմիր գիրք, Ռոստով, 1919, էջ 125-127:
[8] Այդ ջոկատները չորսն էին՝ Էրզրում, Երզնկայի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի:
[9] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ) ֆ. 240, ց. 1, գ. 1, թ. 22:
[10] Որբանոցների հիմնումը Էջմիածնում պայմանավորված էր որբերի մեծ թվով (մոտ 4000):
[11] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 506, թ.151-155:
[12] Նույն տեղում, ֆ. 240, ց. 1, գ. 1, թ. 95:
[13] Նույն տեղում, թ. 51:
[14] Մինչև 1918թ. սկիզբը Մոսկվայից կոմիտեն կանոնավոր կերպով ստանում էր դրամ, մթերք և հագուստեղեն: 1918թ. փակվեցին հաղորդակցության ճանապարհները Ռուսաստանի հետ, կոմիտեն կտրվեց կենտրոնից:
[15] Դրանք կոմիտեի Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի կողմից նվաճված և ռուսների նահանջից հետո թուրքական զորքերի կողմից գրավված տարածքների որբանոցներն էին:
[16] Հետագայում պարզ դարձավ, որ դա այդքան էլ ապահով չէր, քանզի թուրքերի առաջխաղացման և նրանց կողմից քաղաքի գրավումից հետո հաջողվեց փրկել կոմիտեի որբանոցի 1200 սաներից միայն 500-ին:
[17] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 33, II մաս, թ. 82:
[18] Նպաստի չափը, կապված ապրանքների գների թանկացման հետ, պարբերաբար ավելացել է՝ 70 ռուբլուց հասնելով 150 ռուբլու, ապա՝ 240 ռուբլու:
[19] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 33, I մաս, թ. 8:
[20] Համաձայնագիրը ստորագրել են Հայաստանի խնամատարության նախարար Ս. Թորոսյանը և Ամերիկոմի լիազոր Էլդրը:
[21] ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 750, թ.126-129:
[22] Նրանք ընդունելի էին համարում միայն Ամերիկոմի նյութական աջակցությունը:
[23] Այդ որբանոցներից մեծ մասը Մոսկվայի հայկական կոմիտեի նախկին որբանոցներն էին՝ 12 որբանոց՝ 578 որբերով:

[24] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 84-89:
[25] Նույն տեղում, ֆ. 205, ց. 1, գ. 619, թ. 143:
[26] Շուրջ 20000 հայ որբ երեխա դեռ մնում է անխնամ, փողոցներում սովին ու համաճարակային հիվանդություններին մատնված:
[27] Քիչ չեն օրինակները, երբ ԱՄՆ-ից եկող մթերքի կամ դեղորայքի պաշարները Հայաստան չեն մտել Վրաստանի կողմից ստեղծված արգելքների պատճառով, կամ էլ շատ են ուշացվել և տեղ են հասել՝ մասամբ թալանված:
[28] 1920թ. մարտից մինչև նոյեմբեր, 8 ամսվա ընթացքում, հայկական դրամն արժեզրկվել է 50 անգամ:
[29] ՀԱԱ, ֆ.199, ց. 1, գ. 114, թ.72:
[30] 1918թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1920 թ հունվարի 1-ը Հայաստանի պետական գանձարան մուտքագրվել է ընդամենը 30 մլն. (չեկերով), բայց ծախսվել՝ 300 միլիոն:
[31] Հասարակության օժանդակության նվազումը պայմանավորված էր նրա աղքատացմամբ և ընդհանուր տնտեսական ճգնաժամի արդյունք էր:
[32] Հենց այս անհրաժեշտությամբ էլ պայմանավորված՝ ամերիկացիների որբախնամ ծառայությունից չհրաժարվեցին նաև Խորհրդային Հայաստանի իշխանությունները:
[33] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, թ. 44:
[34] «Հառաջ», 1920, հուլիս, N 39:
[35] «Հառաջ», 1920, օգոստոս, N 72:
[36] «Հայաստանի ձայն», 1919, նոյեմբեր, N 13:

Резюме

Завота о сиротах Московского Армянского Комитета.

Мариам Киракосян

Во время Первой Мировой Войны и после нее перед всеми армянами встал вопрос о попечительстве осиротевших детей. Только в Российской империи количество этих сирот достигло 10000, а в 1918 году и в последующие 2 года достигло 40000. Тяжелую и ответсвенную задачу воспитания и завоты сирот взяли на себя созданные еще в 1914-1915гг. некоторые зарувежные и армянские благотворительные организации и общества, одним из которых является Московский Армянский Комитет. Свою благотворительную работу эта организация начала в 1915г. и продолжила до советизации Армении, спасая тысячи сирот от гибели, давая им овразование, профессию, подготавливая их к самостоятельной жизни.

Summary

Moscow Armenian Committee's Activity in Taking Care of Orphan.

Mariam Kirakosyan

During the World War I and after it one of the main problems for all the Armenians was taking care of orphans. Only within Russian Empire there were more than 10.000 children, but from 1918 and the following two years their number grew up to 40.000 orphans.

Since 1914-1915 several Armenian and foreign offices took responsibility in taking care and bringing up of the orphans. One of them was Armenian Committee in Moscow. In 1915 it began it activity and went on up to Soviet system in Armenia saving thousands of children from death, gave them education, helped them in choosing future profession.